ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«29» 02 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000019

Ձեռնարկողը՝ ***Քաղաքացի Ն. Բախչաջյան***
Ք. Երևան, Զ. Քանաքեռցու 117/1 շ, 25բն.

Գործունեությունը՝ ***Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան 29/27 հասցեում նախատեսվող պահեստային և գրասենյակային շինությունների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դռնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000013

<29> 02 2020թ.

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան 29/27 հասցեում նախատեսվող պահեստային և գրասենյակային շինությունների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ Ն. Բախչաջյան

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան

Քաղաքացի Ն. Բախչաջյանի կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան 29/27 հասցեում կառուցել պահեստային և գրասենյակային շինություններ:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.800003հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների:

Նկարագրական մաս. կառուցապատման ենթակա տարածքն իրենից ներակայացնում է թեք ռելիեֆով անբարեկարգ տարածք՝ խառը աճած բուսականությամբ: Հողաբուսաշերտի հզորությունը կազմում է 10-15սմ: Հողամասի հարակից տարածքներում գտնվում են բնակելի և հասարակական շենքեր, ազատ տարածքներ, շինություններ և ճանապարհներ: Կառուցապատման ենթակա տարածքում մշակութային հուշարձաններ և պահպանության ենթակա տարածքներ չկան:

Նախատեսվում է կառուցել 1710քմ մակերեսով պահեստային միահարկ շինություն և երկհարկանի վարչական նշանակության շինություն՝ 216քմ կառուցապատման մակերեսով: Պահեստային շինությունը նախատեսվում է կառուցել միահարկ՝ առանց ներքին բաժանումների: Շինությունը կունենա 6մ օգտագործելի բարձրություն և 4 հիմնական մուտք:

Կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է 1926քմ, կանաչապատման մակերեսը՝ 4960քմ:

Կառուցապատման ենթակա շինություններում գազամատակարարում չի նախատեսվում:

Պահեստային շինությունում ջեռուցում նախատեսված չէ, իսկ գրասենյակային շինության ջեռուցումը կիրականացվի էլեկտրական համակարգերով: Ժամանակավոր միացումը կիրականացվի ԿՏԵ7897 ե/կ-ի ց/լ վահանից, մինչև հիմնական 44782111 պատվերի իրականացումը:

Բնակելի թաղամասի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ Թբիլիսյան խճուղուն զուգահեռ անցնող հարևանությամբ անցնող d=800մմ ջրատարից: Ջրահեռացման ցանցը կմիացվի Թբիլիսյան խճուղով անցնող կոյուղագծին:

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են ըստ ժամանակացույցի և օրացուցային գրաֆիկի, որի տևողությունը հաշվարկվել է 24 ամիս:

Շինարարության ժամանակ բնառեսուրսից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (19 մարդ) և կազմել 329.04մ³/շին.ժամ կամ՝ 0.457մ³/օր: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 225մ³/շին.ժամ կամ՝ 0.75մ³/օր: Ջրօգտագործումը կկազմի ընդամենը 554.04մ³/շին.ժամ:

Երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 1.700մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որն ամբողջությամբ օգտագործվելու է որպես հետլիցք: Տեղանքի բարեկարգման աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է հողակտորի մասնակի հարթեցում, հանույթի և հետլիցքի իրականացում՝ մոտ 2000-3000մ³ ծավալով:

Հողային աշխատանքների ընթացքում կառաջանա 900մ³ հողաբուսաշերտ: Հողի բերրի շերտի օգտահանումը և պահպանումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներով:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է՝ 100-120կգ և շինարարական աղբը՝ 800-900մ³:

Շինարարական աղբը ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Նոր կառուցվող բնակելի համալիրի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսվում է.

–շինարարական աշխատանքների /փոշու առաջացման աշխատանքներ/ ընթացքում, փոշենստեցման նպատակով, ջրցանի իրականացնել տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,

– ջրցանը հաշվարկել այնպես, որ չառաջանա մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

–շինարարական գործընթացում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով ապահովել այդ տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակը,

–շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրել ավազ կամ մանրախիճ. մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի ժամանակ փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով,

–օգտագործվող մեքենաներից յուղերի ու քսայուղերի արտահոսքը կանխելու և դրա հետևանքով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ իրականացնել հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ,

–աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

–շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, ներգրավել խլացուցիչներով զինված կամ ցածր աղմուկ առաջացնող ժամանակակից տեխնիկական միջոցներ,

–սորուն նյութերը (ավազ, խիճ, հող և այլն) տեղափոխել փակ ծածկով մեքենաներով,

–փոշու տարածումը կանխարգելելու նպատակով՝ սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով,

–շինարարական նյութերը տեղադրել բետոնապատ մակերեսի վրա,

–մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

–տեղումներից առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդել պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվելու է շինարարական հրապարակին կից: Այն իրենից ներկայացնում է պլաստմասե 20խմ ծավալով տարողություն, որի ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենալու մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը օգտագործվելու է տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը հեռացվելու է՝ որպես շինաղբ,

–աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած թափոնները տեղափոխել ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

–կանաչապատումն իրականացնել համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում՝ 700 հազ. դրամ:

–Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ (սիզամարգ՝ 4675 քմ, ծաղկանոց՝ 142քմ, ծառատեսակներ՝ 35): Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ոռոգման ցանցի միջոցով: Միացումը կիրականացվի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Պատճառաբանական մաս. նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել է քաղաքաշինության կոմիտեն: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկման պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Ն. Բախչաջյանի կողմից ներկայացված Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան 29/27 հասցեում նախատեսվող պահեստային և գրասենյակային շինությունների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ Հ. Ալեքսանյան